



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

25 ապրիլի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի
Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի
Ա. Խաչատրյանի

Քննության առնելով Գագիկ Սարգսյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Գագիկ Սարգսյանը 2017թ. ապրիլի 5-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասին, 78-81-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 7-րդ մասի «Փորձաշրջանի ընթացքում (...) հանցանք կատարելու դեպքում» դրույթը:

կամ

Բացահայտել՝ նույն դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը (սահմանելով՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով վերանայման հնարավորություն)»:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ.

1. Դիմողի կարծիքով՝ «փորձաշրջանի ընթացքում հանցանք կատարելու դեպքում դատարանը վերացնում է» հասկացությունը կարող է ընկալվել մի դեպքում այնպես, որ հանցանքը պետք է կատարված լինի անձի՝ փորձաշրջանի մեջ գտնվելու ընթացքում, որին տրամաբանորեն հետևում է «... դատարանը վերացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելը և նշանակում է պատիժ» նախադասությունը, որը հանդիսանում է քրեաիրավական ներգործության միջոց՝ փորձաշրջանի պայմանը խախտելու համար, իսկ մյուս դեպքում՝ «փորձաշրջանի ընթացքում հանցանք կատարելու դեպքում» նախադասությունը կարող է ընկալվել որպես փորձաշրջանի ժամանակահատվածում կատարված, սակայն հետագայում բացահայտված հանցագործություն, որի դեպքում քրեաիրավական ներգործության միջոցի կիրառումն անթույլատրելի է, քանի որ հակասում է դատվածության մարման և պատիժն ի կատար ածելու վաղեմության օրենսդրական սկզբունքներին:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին նաև այնքանով, որքանով այն չի նախատեսում նշանակված փորձաշրջանը վերացնելու և դրա արդյունքում պատիժ նշանակելու հստակ և ժամանակային ընթացակարգ՝ հակասելով նաև դատվածության մարման, պատիժը նշանակելու վաղեմության ժամկետների և ուժի մեջ մտած դատավճիռը վերանայելու օրենսդրական պայմաններին, հետևաբար, նաև չի նախատեսում մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների ապահովման և պաշտպանության անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը:

2. Դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առկա չեն դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

3. Դիմողը միջնորդություն է ներկայացրել պետական տուրքի վճարումից իրեն ազատելու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 և 31-րդ հոդվածներով, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Գազիկ Սարգսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 7-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Բավարարել Գազիկ Սարգսյանի՝ պետական տուրքի վճարումից իրեն ազատելու վերաբերյալ միջնորդությունը:

3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

25 ապրիլի 2017 թվականի
ՍԴԴԿՈ/2-8